

Թերթ կը ղրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԻՒՆ
ՐԻՍ
10 Ֆր.
Վեցամս. 5 "
Սրտասահման
Տարեկ. 12 Ֆր.
Վեցամս. 6 "
Սմերիկա
2 Տոլ. 30 սէնդ
ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնք եւ
չեն տրուիր:
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏՄՐԻ

ՆՈՅ. 28 ՉՈՐԵՔՇԱՐ 1901

ԹԻԻ 232

ԳՐԱԿԱՆ

Վ. ՀԻԿՈՅԻ ՆՈՐ ԵՐԿԸ

Այս միջոցիս Բարեգի հրատարակիչներէն մէկը, ձեռնարկած է հրատարակել Վիքթոր Հիւկոյի անտիպ գործերուն մէկ հաւաքածոն, որմէ կը քաղենք հետեւեալ սիրուն ա. հանճարեղ «խորհուրդ»-ները.

Քառակոյտ

— Երջանկութեան մէջ մարդ չի կանխատեսեր.

— Հպարտութիւնը առիւծ է, եսասիրութիւնը վագր է, ունայնամտութիւնը կատու.

— Ով որ անկարող է աղքատ ըլլալու, անկարող է նաև հարուստ ըլլալու.

— Չարութիւն գործողներէն աւելի զգուշ ըլլալու է քան չարիքին վրայ խնդացողէն.

— Շատ մը քարեկամներ արեգակնային ժամացոյցի պէս են. միայն քեզ փայլեցնող ժամերը կը ցուցնեն.

— Չարերը կը նախանձին ու կ'ատեն. Իրենց զխայլում արտայայտելու ձեւն է աս.

— Գիտունը միայն գիտէ թէ տգէտ է.

— Անգործութիւնը տղոց երջանկութիւնն է, ծերերուն ալ դժբաղդութիւնը.

— Կատարելապէս երջանիկ ըլլալու համար չի բաւեր երջանկութեան տիրանալ. պէտք է նաև անոր արժանի ըլլալ.

— Խօսքդ կարճ, միտքդ յստակ, կեանքդ՝ ուրջ ըրէ.

— Ի հարկին կծու խօսէ, բայց ոչ լպիրշ:

Ձգուչացիր սա երկու բաներէն. անպատշաճ բաներէ և աղտոտ բաներէ.

— Կատարեալ կին մը պէտք է ըլլայ տիրուհի և սպասուհի միանգամայն.

— Կնոյ սիրտը կը կապուի իր սուածով.

Մարդուն սիրտը կը գատուի իր առածով.

— Երբ կին մը կը խօսի, նայէ՛ թէ ի՞նչ կըսեն իր աչքերը.

— Շատ մը թեթեամտութիւններ կան զոռնք մարդ կը գործէ ծուլութեան պատճառով. Իսկ կինը շատ մը յիմարութիւններ կընէ անգործութեան պատճառով.

— Կինը եզական ուժ մը ունի որ կը բազկանայ իր տկարութեան երեք ձիւրքերէն. այդ տկարութիւնն է իրական, ուժեղ, առերևոյթ.

— Կիններ, կիններ. Մեր բոլոր վիշտերէն, մեր բոլոր բերկրանքէն, մեր մէջ տիրող բոլոր յուզիչ սարսուռներէն կազմուած էք դուք. Իրաւ մեր կողերէն շինուած Նւաներ էք. Աստուած ձեր գեղեցիկ կիսադէմքին վրայ թարթիչներու ստուերն ու թիւրերուն բոցը դրած է որպէս զի զգլխէք, երջանկացնէք, յուսահատեցընէք մեզ. որպէս զի մեր խօսքերէն բոց հանել տաք, մեր սրտերէն ալ զմայլանքի գեղօններ.

— «Աստուած պարկեշտ է, Աստուած առաքինի է, Աստուած զղաստ է, Աստուած անկեղծ է» չի՞ կրնար ըսուիլ. Բայց կըսուի. Աստուած արդար է, Աստուած բարի է, Աստուած մեծ է, Աստուած ճշմարիտ է.

Ինչո՞ւ համար. . .

— Վառն զի պարկեշտութիւն, առաքինութիւն, զգոստութիւն, անկեղծութիւն, յարաբերական բաներ են.

Իսկ արդարութիւն, բարութիւն, մեծութիւն, ճշմարտութիւն՝ բացարձակ են.

Ինչո՞ւ չենք կրնար ըսել թէ Աստուած առաքելն է:

Անոր համար որ Աստուած կատարեալ է:

— Հոգի եմ ես: Կը զգամ թէ ինչ որ հոգին պիտի յանձնեմ: Ես չեմ, իմ էութիւնս չէ: Իմ եսս ուրիշ տեղ պիտի երթայ:

Ո՞վ հոգ, իմ անգուցիս չես դառն:

— Ամէն անգամ որ մարդ իր խղճին խորը կը զգայ թէ իրաւունք ունի ներելու, ըսել է թէ պարտի ներել:

ԱՉԳԱՅԻՔ

Փամհարեան եղբայրները 200 Փր զօկեր են Պատրիարքարան, Մարաշի որպանոցի որբերուն առաջիկայ Ծննդեան տօնին առթիւ քաղցրաւեանի բաշխելու համար:

— Մոսկուայի հայ գաղթականութիւնը Յովհաննէս Լազարեանի մահուան հարիւրամեայ տարեդարձին առթիւ արոշեր է եկեղեցիին դաւթին մէջ աղջկանց ծխական վարժարան մը հաստատել:

— Պուրբէջէն մեղ կը գրեն թէ խաղամուտութիւնը յառաջացած է հոն մեր գաղթականաց մէջ: տարիքոտ մարդիկ պատանիները կը համոզեն խաղի կը հրաւիրեն եղբւր անոնց ձեռքի դրամները յափշտակելու համար: Անները փեսին հետ, ոմանք ալ իրենց եղբորորդուցը հետ օրն ի բուն կը խաղան, շատ անգամ մինչև կէս գիշեր: Բազում զպրոցական տղայք իրենց խաղամուտ հօրերուն քով կերթան կը սպասեն եղեր որպէս զի անզոյ հայրերնին առնեն տուն տանին, բայց ո՞վ է գացողը. խեղճ տղաքները յուսահատ կը վերադառնան, հայրերնին հոն թողլով:

— Վերջերս Նոր-Նոսիսիլեանի Ս. Թորոս եկեղեցին դուրս մտնելով 700 բուսլի արժողութեամբ անձիւներ և եկեղեցական սպաններ տալով են:

— Նոյնպէս Պայանտրի եկեղեցին հօկտ. 17ի գիշերը գողեր մտնելով եկեղեցւոյն բոլոր ոսկի և արծաթ առարկաները կողոպտեցին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր

Փամանակէ մը ի վեր է որ դարձեալ «Իրաւունքի Խմբագիր Ս. Գուրպէթեանի մասին «Հուզուգ» թրքատառ թերթին խմբագրման առթիւ կարգ մը անհաճոյ տարաձայնութիւններ կ'իմանանք: Այդ տարաձայնութեան զուտ զրպարտութիւն մը ըլլալը լուսաբանելու համար կարծեմ բաւական է տեղեւոյ նախկին հիւպատոս: Բէֆիգ Պէյի մէկ խոստովանութիւնը հրատարակելը:

Քաղաքիս վաճառականներէն միոյն վաճառատան մէջ Ս. Գուրպէթեանի հետ գտնուած միջոցնուս՝ Վառնայի նախկին հիւպատոս (այն տառն քէօսթէնձէի հիւպատոս) Բէֆիգ պէյը զուգարտութեամբ մը ներս մտաւ: Կարգ մը խօսքերէ վերջ Գուրպէթեանի արտոման մասին խօսք բերելով յանդիմանական շեշտով մը ըսաւ, «Եթէ «Հուզուգ» հրատարակութիւնը դադրեցնէիր խոստացած պաշտօններս և դրամական նուէրներս ընդունելէ զատ Օտտա ալ չէիր արտոնուեր»: Ներկայ ելողներս խիստ գոհ մնացինք Ս. Գուրպէթեանի այն արհամարհական պատասխանին զոր ուղղեց թիւրք պաշտօնեային: Բէֆիգ՝ կատաղած «կը տեսնեմ որ Վառնայի բնութիւնը տակաւին ձգած չես, սակայն, պիտցիր որ Ռումանիոյ մէջ աւելի գէշը կրնամ ընել քեզ» ըսաւ:

Այս խօսակցութեան ներկայ գտնուելս զիս կը ըստիպէ յանուն արդարութեան յայտարարել թէ՝ «Հուզուգ» թրքատառ թերթին խմբագրման առթիւ Ս. Գուրպէթեանի համար դրուածները զուտ զրպարտութիւններ են, աւելի ոչինչ:

Կը խնդրեմ. Տէր Խմբագիր, որ հաճիք յանուն արդարութեան ներկայս հրատարակել «Հայելի» յառաջիկայ թիւին մէջ:

Ընդունեցէք խորին յարգանքներս:

24/7 Նոյ. 1901

Սիւսակ Մելիքեան

Քոնսթանցա

Հայելի

— Կը հաւատանք թէ Հուզուգի Խմբագիրը առաջին թերթը հրատարակելէ ետքը Բէֆիգ պէյի կողմէ ըստացուած դրամական նուէրը ու պաշտօնը մերժած ըլլալ: բայց երբորդ թիւը հրատարակուելէ ետքը Թէօն Թուրքերու գիմելով դրամ ուզելուն ինչ պիտի ըսէք: 25° մի որ երէկուան Բէֆիգ պէյէ մը չառնուածը՝ այսօր Հիւսնիւ կամ Օսման պէյէ մը առնուած է:

Իսկ գալով ձեր այն յայտարարութեան, թէ «Հուզուգ» թրքատառ թերթի խմբագրմանը առթիւ Ս. Գուր-

պէթեանի համար գրուածները զուտ զրպարտութիւններ են, կը պատասխանենք. եթէ դուք նոյն թերթին պարունակութեանը տեղեակ ըլլայիք, այդ տողերը չի պիտի գրէիք: «Իրաւունք»-ի խմբագրութիւնը հայերէն թերթովը առաջին օրէն իսկ ճշեալ բրիտանիայ երկիրներու ազատութեանը կը ցանկայ, միևնոյն խմբագրութիւնը իր թրքատառ իրաւունքով (Հուգուգով) իբր ժէճն թճարբերու օգկան՝ ազատեալ կամ ազատուելիք նոյն երկիրներուն համար կ'ափսոսայ, ըսելով.

«Ափսոս որ կտրիճ օսմանցիներու կարմիր արիւններուն փոխարէն առնուած երկրին շատ մը մասերը ուրիշ ազգերու տրուած եւ տրուելու վրայ են».

(Տես Հուգուգ թիւ 2. Խմբագրական, ըստորագրեալ Հ. Շէվքի.)

Միանգամ ընդ միշտ պէտք է գիտնալ թէ «Հուգուգ»-ը հիմնուած է իբր օրկան ժէճն թուրքերու, որոնց ուղղութիւնը մեզ համար նպաստաւոր չըլլալուն չէր վայելեր որ հայու մը կողմէ հիմնուեր:

Կարապետ Պողոս Գալֆահան երկաթագործ, 30 տարեկան, երկայնահասակ սեւ աչքերով և ցորենագոյն, բնիկ Պոլսոյ Գասըմ-Բաշա թաղէն, 1896էն ի վեր մէջտեղ չկայ. ասկէ 3 տարի առաջ Աթէնք գտնուած է եղեր:

Արդ, ո՞ր յիշեալին հասցէն իմացնէ խմբագրութեանս, մարդկութեան պարտականութիւն մը կատարած պիտի ըլլայ հանդէպ անոր գերդաստանին:

ԹՈՒՈՒՑԻԿԸ

Մայրագոյն Արեւելիի ազգաց զքօսանքի առարկան

Մայրագոյն արեւելքն է թուրքիկին ճշմարիտ հայրենիքը. Երկրագնդիս ամբողջ տարածութեան վրայ գտնուող ոչ մէկ մաս այնքան լաւ ընդունելութիւն ըրած է թուրքիկին որքան ծայրագոյն արեւելք. Այս երկիրներուն մէջ միայն մանուկները չեն որ իրենց խաղալիքներուն մէջ ամենէն աւելի թուրքիկը կը նախընտրեն. մեծ և պըզտիկ հաւատարմապէս կը գործածեն զայն: Շատ մը տեղերու մէջ տեսակ մը սնտոի պաշտամունքի առարկայ ալ եղած է և անոր կը վերագրեն գէշ ոգին հալածելու եղական յատկութիւնը.

Ահա ասոր համար ճամբայ ելնող և կամ չըրջագայութեան դացող տեղացիին հետը կառնէ նաեւ իր թուրքիկը որուն առասանը (գըննապ) իր կառքը քաջող կենդանիին կոտորներէն մէկուն վրայ կը հաստատէ: Չկայ օր մը որ հանսիի արուարձաններուն մէջ չի տեսնուին թուրքիկներու

հտրիրաւոր խումբեր որոնք կը տատանին քաղաքին տուններուն վրայ, իրենց առասաններով տանիքներուն կապուած.

Հետաքրքրութեան մասնաւոր պարագայ մըն ալ. գրեթէ բոլոր այս թուրքիկները երաժիշտ են ինչ որ ալ աւելի կաւելցնէ տեսարանին արտասովորութիւնը. Ասոնցմէ իւրաքանչիւրը իր վերի ծայրին վրայ կը կրէ վրան ծակենման բացուած քներ ունեցող պամպուկ կտոր մը, տեսակ մը որինց որուն մէջ, մշտատե կերպով կը սուլէ հովը և որ ալիովորմ ձայներ կը հանէ միմնութեամբ վիճակին համեմատ: Եթէ մարդ քիչ մը բարի կակիցողութիւն ունենայ, պիտի կարծէ թէ՝ եւտիլական տախիլներու նուագահանդէսի մը ներկա կը գտնուի.

Այս երաժիշտ թուրքիկները Եւրոպայի անձանթի են, ի բաց առեալ Ռուսիոյ մէկ քանի գաւառները ուր Արեւելքէն փոխադրուած են.

Արեւելեան թուրքիկները շատ արուեստագիտական կերպով յօրինուած են.

Երբեմն անոնք թուրքի մը կերպարանք կը ներկայացնեն որուն մայմինը և թեքը փայլուն գոյներով կը ներկուին. երբեմն կը ներկայացնեն մանաւանդ Զինատանի մէջ քանի մը մտացածին վիշապներ որոնց պոչերը վէտ վէտ կը ծածանին օդին մէջ. Մայրագոյն արեւելքի տարօրինակ արուեստը իր զարհուրեցուցիչ և ծաղրական հազարաւոր յօրինուածներով կը զարդարէ թուրքիկները. հրացայտ աչքերով ճիւղներ, երկաթաթել գիմակով զարհուրելի պատերազմիկներ, արտաքոյ կարգի ձուկեր, ոսկեղէն և ծիրանի թեքերով հրաշալի թուրքներ. Ճաբոնական և Զինական արուեստագէտներու բոլոր լիառատ երեւակայութիւնները ընդարձակ ասպարէզ մը կընծայեն տոհմային զբօսանքի առարկային որ բովանդակ մարդկային ցեղի մը նախընտրելի ժամանցն է.

Թուրքիկին կմախքը շինուած է դիւրաթեք ճիւ (սաղ)է. թեթեւ ու շատ դիմացկուն թուրքով մը ծածկուած. Այս թուրքին գլխաւորաբար թեւերը և կողերը կազմող մասը պրկուած չէ, կըրնայ ուռեմալ հովին ազդեցութեան տակ որ կը սպրդի մասնաւորապէս շինուած ծակերու բացուածքներէ. թուրքիկին տոկունութիւնը հատաւ պահելով: Այս թուրքիկներուն վերելքի ուժը բաւական զօրաւոր է: Ճաբոնական փոքրահասակ թուրքիկ մը կրնայ դիւրութեամբ վեր քաշել լապտեր մը. այս փորձը մանաւանդ դիւշեր ատեն եթէ կատարուի՝ շատ հետաքրքրական արդիւնք մը կուտայ.

Մ. Պ. Զ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԻՆՈՒ ՄԷՋ

(Շար. եւ վերջ)

Թափօրը բազին արեւելակողմէն պէտք է ներս մտնէ, և երբ տուն հասնի, միջնորդը երկու անգամ հարսէն կը խնդրէ որպէս զի գահաւորակէն դուրս ելլէ: Երաժշտական կտորներ կը նուագուին նոյն միջոցին: Հարսը երրորդ խնդրանքին վրայ միայն գահաւորակէն դուրս կելլէ, բայց դժկամակութեամբ: Կիները պէտք է բռնութեամբ փեսային տունը առաջնորդեն զայն: Փեսան ալ երեք անգամ կոչուելէ յետոյ միայն երեւան կելլէ և կերթայ հարսին ձախակողմը կը բազմի: Տուած նշանի մը վրայ հարսու փեսայ երեք անգամ կը ծնադրեն, մինչեւ գետին ծռելով: Յետոյ հարսը իր ամուսնին առջեւ կը խոնարհի, ի նշան հպատակութեան: Փեսան, կնքահօր թախանձանքներուն վրայ իր ապագայ կնոջ առջեւ կը ծնադրէ բազմաթիւ զաւակներու ծնունդը բարեմաղթելով:

Երբ այս ձեւակերպութիւնները աւարտին, ամուսնական արարողութիւնը կատարուած կը համարուի գրեթէ, որովհետեւ ուրիշ ձեւակերպութիւն մըն ալ կայ զոր պիտի նկարագրենք քիչ մը վարը: Այդ միջոցին երաժշտութիւնը կարելի եղածին չափ աղմկայից է և հրթիռները պսակադրութեան կատարումը կը ծանուցանեն հեռուն:

Ամուսնական արարողութիւնը կը վերջանայ հացկերոյթով մը: Չինական սովորութեան համաձայն, կին մը չի կրնար իր էրկան և զաւակներուն հետ ճաշել, բայց ամուսնութեան օրը բացառութիւն կը կազմէ: Հարսու փեսայ ճաշարահ մանելէ առաջ երկու բաժակներ կը լեցընեն, որոնց պարունակութիւնը իրարու կը խառնեն մէկտեղ խմելու համար, ի նշան որ տերու միացման, ինչքերու հաւասարութեան, ուրախութեանց բաժանման: Ձախորդութեանց, վրայ չի խօսուիր բնաւ, որովհետեւ կինը վրատահ է թէ այդ մասին ամենէն մեծ բաժինը իրեն պիտի իյնայ:

Այս հանդիսաւոր բաժակաճառէն յետոյ, փեսին թեզանթէն կանանչ թաշկինակ, իսկ կնոջ թեզանթէն կարմիր թաշկինակ մը Բանելով իրարու կը կոպեն զանոնք: Մէկ ծայրը փեսան կը բռնէ իսկ միւսը հարսը, ու այսպէս ճաշարահ կը մտնեն: Սակայն մինչեւ այդ պահուն փեսան իր կնոջ ֆիզիքական վրայ գաղափար չունի: Միջնորդին խօսքերէն միայն կըրցած է դատել անոր ֆիզիքական գեղեցկութիւնը: Բայց ատենը եկած է ալ այդ գաղտնիքը պար-

զելու: Եթէ միջնորդին հաւաստածէն շատ հեռու գտնուի հարսին ֆիզիքականը ու խօստացուած գեղեցկութեան մը տեղ ահռելի տգեղութիւն մը ցցուի իր առջեւ, փեսան ազատ է ամուսնութիւնը խզել և ամօթալից կերպով վռնտել հարսը, բան մը զոր չի կրնար ընել հացկերոյթէն յետոյ: Այս պարագան շատ հազուադիւրէն է, բաւական է որ հարսը երիտասարդ ըլլայ: Չինացիի մը համար կիները իրարմէ շատ տարբերութիւն չունին, անիկա աւելի ոտքին պզտիկութեան կը նայի քան դէմքին սիրունութեան, մանաւանդ որ ոտքերուն պզտիկութիւնը կրնայ սուղեւ դիւրաւ: Խոնոյքէն ետքը հարսը իրեն յատկացուած սենեակը կ'առաջնորդուի էրկան կողմէ: Նորապէս կինը սեղանի մը վրայ կը գտնէ գերձան, մետաքս, մկրատ, որոնք պերճախօսերէն կը յայտնեն իրեն թէ խենթութիւններ ընելու, պճնուելու ատենը անցած է ալ, այնուհետեւ պէտք է աշխատիլ:

Ընթերցողները թերեւ խորհին թէ հարսու փեսայ, իրենց ունեցած կարճատե տեսակցութենէն յետոյ փափագին լաւագոյն կերպով ճանչնալ և գէթ մեղրալուսնի առաջին օրերուն գլուխ գըլխի երկար տեսակցութիւններ կ'ունենան: Բայց Չինացիները այդքան զգայուն էակներ չեն, անոնց համար նուաստութիւն մըն է այդ ատիճան իր կնոջմով զբաղիլ: Երբ ցորեկ ատեն տեսնէք նորապսակ ախոյր, օտար կը կարծէր իրարու նըկատմամբ: Կինը առանձնացած՝ տան դորժերով կը զբաղի, իսկ ամուսինը դաշտ կ'երթայ, կը պոտի, իր ընկերներուն հետ կը զուարճանայ, առանց մտքէն անցնելու իր կինը, որպէս թէ գոյութիւն չունենար ան: Գորովի խօսք մը անգամ չուղղեր իր կնոջ: Աւելին կայ՝ ծաղրուելու վախէն «կինս» չըսեր երէք ալ «կրակ վառողս, տնեցիներէն մէկը» «տղոյս մայրը»: Կինն ալ իր էրկը կը կոչէ «տէրս», «գործակատարս»: Հայրու տղաք առանձին կը ճաշեն, որոնց կը սպասարկեն կինն ու աղջիկները, այս վերջինները անոնց ճաշը աւարտելէ յետոյ միայն կրնան ճաշել:

Երբ կինը մեռնելու վրայ է, ոչ ոք իրար կ'անցնի, գեղ ու դարման կը հասցնէ. «Բեհ, կ'ըսեն, կ'ըմբռնի, ուրիշ կին մը կ'առնէ», աս է բովանդակ դամբանականը խեղճ չինացի կնոջ:

Ինչպէս նախորդ յոդուածի մը մէջ ըսինք, աղքատները, միջին դասակարգի պատկանողները հարուստներուն չափ պերճանք ցոյց չեն տար այս առթիւ: Թանկագին քարերուն տեղ կը դրածածեն ապակիէ մարգրիտներ ու մետաքսեղէնի տեղ գունաւոր բախակեղէն հագուստներ: Երբեմն ծախքերու խնայողութիւն ընելու համար երկու ամուսնութիւններ մէկտեղ կը կատարեն:

Ու այս պարագային շատ անգամ ամուսնութիւնը կը կատարուի բնակարանի փոփոխումով միայն: Ծնողքները սապէս կը խօսին. «Աղջիկդ կնութեան կուտաս տղուս, ես ալ աղջիկս տղուդ կուտամ, լինցաւ գնաց»: Ասիկա կ'ապացուցանէ որ Զինացիները ամուսնական արարողութեան մէջ երկու ծայրայեղութիւն կը սիրեն, կամ բազմածախս հանգիստաւորութիւնները և կամ բոլորովին անշուք:

Թատգոլ.

ԳՐԱԽԱՂ

Նոր գրողները ի՞նչ խրատ առին իրենց փորձառու վարպետէն՝ Ալփասլանէն.

—Միշտ խելօք գրել, ծանր, դժուարին բաներ չի քշել. . . դուրս չելլել Զ. Բ.:

Մեր մէջ վարժապետները երբ մեռնին, ի՞նչ կը կտակեն.


—Իրենց տղաքը, թշուառ ու սգաւոր, որովհետեւ ատ միայն կը մնայ. . . իրենց թ. Շ. Կ.

Մ. . . Բարեկամս զիս միշտ կը հոգայ, բոլոր գործերս ան կը կատարէ.

—Խրատ տամ՝ քեզի, միամիտ տղայ. դուն գործ մի՛ յուսար երբէք Օ. Դ. Բ.

Զուարթ էր տղաս ճնճուկի մը պէս, հիմա ի՞նչ ֆարխ չունի սէրսէմէն.

—Որովհետեւ ներս մտաւ նա հիմա մեր քարեկաւդ գպրոցին Ս. Մ.



Կուզ մը իր մէկ թատերախաղը կը կարդար թատրոնի մը գերասաններուն, թատրոնապետը ներկայ էր.

—Եթէ հեղինակութեանս մէջ սխալ մը զարնէ ականջնուդ, կըսէ կուզը, ուղղեցէք զիս.

—Սխալը կարելի է իմաց տալ, բայց ձեզ ուղղել, անհնարին է, կը պատասխանէ թատրոնապետը.

Մօնթէ Բառլօի մէջ

Կին մը, ուսուցիչի սեղանին առջեւ կը վարանի, վասն զի չի գիտեր ո՞ր թիւին վրայ գնէ իր ոսկին: Աղինը պարսն մը խորհուրդ կուտայ իրեն՝ ստակը գնել իր տարիքին համապատասխանող թիւին վրայ, ապահովցնելով զինքը թէ ատով բաղդը պիտի յաջողէր.

Կինը կը հաւանի և ոսկին կը գնէ 22 թիւին վրայ: Իսկոյն 36 թիւը կելլայ.

—Ա՛հ, պարոն, զիս սխալեցուցիք.

—Ո՛չ տիկին, եթէ իմ տուած խորհուրդիս հետեւէիք, պիտի շահէի՛ք. . .

Երկու տիկնայք

Ծագկահաս կին մը որու ծննդաբերութիւնը յոյժ ծանր եղեր էր, օր մը կըսէր Սօֆի.Արնուշ տի. —Ո՛հ, բարեկամուհիս, ի՞նչ պէտք էր այնչափ ցաւ քաշել երջանկութեան վայրկեանի մը համար.

—Ի՞նչ ընենք սիրելիս, ըսաւ կորովամիտ գուսանը, ծննդաբերութեան ցաւերը մեզ համար հեշտութեան զղջումներն են:

Ամուսնէն դժգոհ կին մը օր մը իր մէկ բարեկամուհւոյն կը գանգատէր ըսելով.

—Քո՛ւրուկ, անցած իրիկուն անանկ օրօրտում մը հանեց, անանկ օրօրտում մը քի՛ սա մազ մնաց ինքզինքս բէնճիրէէն վար պիտի նետէի.

Բարեկամուհին, դող ելած—Վույ արեւուդ մեռնիմ, ի՞նչ կըսես, չելլես ատանկ խաղալը բան մը ընես. հէ՛մ անոնց ուզած բանն է, մեզք ես նէ. . .

—Սիրտդ թունդ մի՛ հաներ, քո՛ւրիկս. բէնճիրէ կըսեմ նէ՛ տէ՛յ վարի խաթի՛ սօխախին վրայ նայող, զէ՛մինին հետ պտտ-պտտապար ցած օտային բէնճիրէին համար կըսեմ:

Երկու Դրացուհիք

—Մագթաղինէ հանրմ, իմացանք քի անցած տարի Մըսըր գացող Պօղիկտոս աղան կէնէ ետ դարձեր եկեր է.

—Անանկ է.

—Պարէ հետը անթիքաներ բերե՞ր է.

—Հապա՞.

—Աճապա ի՞նչ է բերածը.

— . . . Կնիկը:

—Էյ, ի՞նչ ըրիք վարպետ, գոչեց յաճախորդ մը ատամնաբուժին, փտտածին հետ մէկտեղ ողջ ակռաս ալ հանեցիք:

—Անհոգ եղիք, բարեկամս, պատասխանեց ատամնաբուժը պաղարիւնութեամբ, ես ալ միայն փտտածին համար դրամ պիտի առնեմ:

Երկու պարոններ անտառը յրսորդութեան գայեր էին, իրենցմէ մէկը նապաստակ մը տեսնելով՝ հպարտօրէն ըսաւ, —Խեղճ նապաստակ, բանդ բուսած է, կտակդ պտուղատէ՝ և հրացանը քաշեց, բայց գնդակը վրիպեցաւ և նապաստակն սկսաւ փախչիլ:

Ընկերը. — Ի՞նչ ըրիր, նապաստակը զարկի՞ր:

—Աւագ, ոչ, տես ի՞նչպէս ալ կը վազէ

—(Մաղրելով) Կտակը գրեւ տալ կերթայ կոր:

ԿՍՄԻՏ

— 0 —

ՇՈՒՄԷՆԻ ՄՈԿՊԵՏԸ

Գաղափարական վզվզուկ մի պէս՝
Իրիխունուս վրայ կանգնած իբեդէս,
Ինքզինքն ցոյց տալ ամենեւեալ անգէս՝
Ճրգնի վերանալ նա յար եւ յաւէս:

Սա է բարբառուն Կայծն Շումենին,
Որ ձայնէ, երգէ մութ գիշերներին.
Մարգարէ դարձած զերթ Դանիէլին՝
Ինքն է հիացող իր ըսածներին:

Եթէ կամենաք անաւ իւր խոսքին՝
Շատ պօլլամաներ կուտայ ձեր բոքին.
Տուրաւք մ'ալ ունի կախում իւր ուսէն՝
Ուսկից նուիրէ պատկեր՝ դիմողին:

Մոգպէս կայծոռիկն թէ ցանկաք տեսնել,
Նախ իր եւ ալ էր ներ կը պարսիք գտնել.
Որք Տրանցա գիւղն, յետոյ Ճումսան՝
Բազկասցիին հետ դեզերին, ման գան:

* *

Մաղթենիք որ ի մեզ վզվզուկ պէտէր,
Խոհուն: Իմաստուն: պարուն աղբարներ,
Գունէ չի շատնան, ու երես յառնեն,
Ձի լոկ զխաւսաւ ստեղծու առքեն:

23 Նոյ. 1901

ԿԱՅԾԱՐԳԵԼ

Հումէն

ԳԻՉ ՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ

Հարբուխի պարզ դարման մը.

Նեղ բացուածքով հողէ ափանի մը մէջ եւ
ապած ջուր լից և մէջը նետէ փոքրիկ դգալ
մը քեաֆիրի փոշի, ելած շողին քթիդ մէջ
քաշէ, բերանդ գոց պահելով:

Յողացաւի դեղ մը.

Բաղնիք երթալով լաւ մը քրտնելու է ու
յետոյ հետեւեալ բաղադրութիւնը քեւելու է ցաւ
ած տեղերը:

Սպիրթօ, Բեաֆիրի և Հինա, շիշի մէջ լեցու
ած ու իրար խառնուած:

Մ. 2.

ԱՐՏԱՍՈՒՍԹՈՐ

Սրտաշարժ բանաստեղծութեանց յանգաւոր տոյն
փոքրիկ փնչիկը որ 32 էջերէ կը բաղկանայ, արժանի
է բանասիրաց ընթերցմանը:

Գին 20 սանդիմ: Հատ առնողներու համար գո-
հացուցիչ կեղծ:

Կեղրանատեղին է մեր խմբագրատունը:

ԱՅԻՆԷԻ ԼԵԹԱՅԻՖ

ՊԻՆ, ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ Ֆարալար վէ շիբայէլէր. Մալիւմա-
թը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի էյլէնճէլէր
վէ Բէսիմի Պիլէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշր օլուհան մէղքիւր քիթապըն պիրինճի ճիւ-
տի խիթամ պուլուպ, խտարէխանէմիզաէ սո-
թըլմագտա աբըր ֆիյ 2 ֆրնք:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (39)

ՌԻՆԷ ՏՐ. ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒՆԵ)



2.

Զորի-եղեգիւն մէկ մակոյկը

Թէեւ տիրաբէկն Մէնկ բաւական գէշ բնացաւ, ինչպէս նախապագած էր և ինչպէս պետք էր պատահել՝ իրիկուան յուզումներէն յետոյ, բայց սակայն չուզեց ամարանոցէն հեռանալ առանց լուր տանելու Բէյ-Հօին վրայ: Կը վախնար որ առջի օրուան եղածները լոկ երազ մը կըլլան:

Ուստի յաջորդ ատուռն գնդամուզի սրահը գնաց ուր գտաւ յարուցեալը ամենահանդարտ բունի մէջ, ընկերակցութեամբ քրիթթիւնի որ նոյնպէս կը բնանար. Այն ատեն հեռացաւ, ցնորքի մը խաղալիկ եղած չըլլալուն ուրախ:

Նաւահանգիստ հասնելուն, փոքր շոգինաւը որ Հոնկ-Քոնկի և Վաւաթի միջեւ կը բռնէր, պատրաստ էր ձամբայ ելլելու, խնդրեց շոգինաւի հրամատարէն որ մինչեւ հոն բաշէ տանի իր մակոյկը. խնդիրը փութ-փոտութեամբ ընդունուեցաւ, վասն մանտարէնը, հակառակ պամպուլի հարկեր հարուածներուն որք կը սպառնային իրեն ոչ նուազ մեծ անձնաւորութիւն մըն էր, 5ն այս արագ միջոցին շնորհիւ, կէս օրուան ժամը երեքին մօտ Հօնան կղզին դարձած էր:

Գեղեցիկ զգեստն հագնելու չափ կեցաւ հոն եւ արդուգործը լմնցունելէ ետք պաշտօնական գահաւորակով ուղղուեցաւ փոխարքային պալատը:

Քոնկ իշխանը քանի մը վայրկեան միայն սպասցուց պայն: Ուստի արժանաւոր մանտարէնը ժպիտ ի շուրթն և բարձր ի գլուխ մտաւ այն սրահն ուր տասներհինգ օր առաջ այնքան գէշ վայրկեան մը անցուցած էր:

— Ըսէք տեսնեմ, պարոն նախագահ, հարցուց կայսեր յարմիկը. նոր բան մը կա՞յ: Վերջապէս գտա՞ք լէն-թա-լանկի խորհրդաւոր սպանիչը:

Այո, Տէր պատասխանեց Մէնկ մինչեւ գետին խոնարհելով:

— Ճշմարտապէս ուրախ եմ ձեզ արգարութեան համար: Ո՞վ է այդ մարդը:

— Տիկին Լիուի մէկ հին գրացին ի ֆուշուի, Չուանուն մսավաճառ մը:

— Կը տեսնէք որ իրաւունք ունէի երբ կը յանգիմունէի ձեզ՝ այդ քաղաքին մէջ անհրաժեշտ բնութիւնն ու խուզարկութիւնները չկատարելուդ: Այդ թշուառականը ձերբակալուեցա՞ւ:

— Գեո ոչ, եւ այն ատեն կարելի պիտի ըլլա՞ղ զայն ձերբակալել, երբ Ձեր Բարձրութիւնն հաճի իր զօրաւոր աջակցութիւնն շնորհել:

— Ի՞նչպէս:

— Վասնզի այդ Չուն, որ տիկին Լիուի ամուսնութեան երկու ամիս առաջ անհետ եղած էր, իր ոճիրէն ետք ապաստանեցաւ Լանսոն կղզիները: Արդ, բնաւ միջոց չունիմ հոն բանելու համար զանիկա:

— Լանսոն կղզիներուն մէջ:

— Այո տէր, Քուրի-Եղէգի հրամատարութիւնը ինք ստանձներ է Բէյ-Հօին տեղ որ երկէ կախուեցաւ ի Հոնկ-Քոնկ:

— Թանկագին տեղեկութիւններ են ասոնք. Այդքան ճիշդ ո՞վ տուաւ ձեզի զանոնք:

Այո հարցում, որուն շատ քիչ կը սպասէր, շիթեցուց Մէնկը, վասն զի չէր գիտեր թէ մինչեւ որ աստիճան խոստովանելու էր իր յարաբերութիւնները Բէյ-քինի հետ որ ափիոնի մեքսիկոյս մըն էր. Մակայն չուտով ինքզինքին եկաւ ու պատասխանեց:

— Մտածեցի որ պարտքս էր մինչեւ վերջին վայրկեանը նեղը գնել դատապարտեալները՝ ճշմարտութիւնն իմանալու համար. Այս նպատակով Վիթթորիա գացի, տեսայ Բէյ-Հօն, եւ թէ լուրս զինքը գլխատել տալու սպառնալքով, ստիպեցի պայն որ յայտնէ ինչ որ հաղորդեցի Ձեր Բարձրութեանը:

— Շատ ճարտար միջոց է այդ եւ քիչ մը կը դարձանէ ձեր դատական սխալը. բայց չեմ տեսներ թէ ինչպէս կրնամ սգտակար ըլլալ ձեր այդ մարդասպանը բռնելու համար:

— Արտօնելով զիս որ քանի մը պատերազմական մակդիմներով արշաւանք մը կատարել տամ Վատրոն կըզգինքուն վրայ:

— Զինուորական արշաւանք մըն է ուղածնիդ. Կը մոռնա՞ք թէ այդ կղզիները, դէթ անոնցմէ մէկ քանին, անմերձենալի են, թէ անշուշտ անոնց մէջ կը բնակին ծովահէնները, եւ թէ արդէն այդ տեսակ արշաւանք մը փորձած ենք որ բնաւ արգիւնք չունեցաւ: Մեր նաւաւ-ղիները կ'ըսեն թէ չեն ճանչնար այդ տեղերը: Մնաց որ, կը խոստովանիմ թէ լուրեր ստացած եմ որոնք թող չեն տար զիս մէկ զինուոր մը իսկ դուրս հանել քան-դոնէն:

— Ի՞նչ լուրեր:

— Կերեւալ որ Թայ-Բինկները արշաւ մը կը պատ-
րաստեն դէպ ի հարաւ եւ անշուշտ համաձայն են Լատ-
րոնի յեղուղակներուն հետ. Արդ, սրովհետեւ այս յե-
ղուղակներ նուազ երկիւղալի են քան ապստամբները,
յոյժ նախամեծար համարիմ ուժերս չբաժնել.

— Ուրիմն ի՞նչպէս ընել.

— Ձեր գիտնալիք բանն է.

— Եթէ համարձակէի կարծիք մը յայտնել.

— Մտիկ կ'ընեմ.

— Ինչպէս գիտէք, Հոնկ-Քոնկի կառավարիչը որ
պահած է ծովահեններուն դէմ՝ անդլիական զորքին եղած
նախատիքին համար, հակառակ այն գոհացումին զոր իրեն
տուիք այդ թշուառականներէն տասը կախելով. Թե-
րեւս եթէ թոյլ տաք, ինք առանձինն պիտի ստանձնէ ա-
զատել մեզ այդ անիծեալ կերակցութեան ձեռքէն:

— Կը հաւատամ, բայց ծանր բան է անդամ մըն
ալ թող տալ որ օտարականները խառնուին մեր գործե-
րուն. Եւ յետոյ, Լատրոն կղզիներուն դէմ յարձակում
մը չէ ձեր ուզածը, այլ Չուի կալանաւորումը, եւ ա-
նոնք չեն ծանշնար զինքը: Կրնայ անհետ ըլլալ կռուին
մէջ, սպանուիլ. Արդ, մեռած կամ ողջ պէտք է անիկա
ինծի, կամ այն ատեն...

— Այո, կը յիշեմ, Տէր, ընդմիջեց Մէնկ, որ չէր
սիրեր որ իր ներկայութեանը ինզիր յուզուի, բայց ե-
թէ այս արշաւանք տեղի ունենայ, որոշած եմ մասնակ-
ցիլ անոր.

— Դո՛ւք, գոչեց փոխարքան ժպտելով ու չկրնալով
ինքզինքը զսպել, վասն զի գիտէր որ իրաւագէտը բնաւ
իր քաջութեամբը չէր փայլեր.

— Ե՛ս անձամբ, կրկնեց գատաւորը, մարտիկի պէս
ցցուելով.

— Ատ ուրիշ բան. պիտի մտածեմ ձեր ծրագրին
վրայ. Ապահով էք որ Հոնկ-Քոնկի կառավարիչը պիտի
հաւանի այդ արշաւանքին.

— Օ՛հ, ապահով եմ, ապահով.

— Ինչէ՞ն գիտէք.

Շար.

ԳԵՂՈՒՆԻ

«ԲԱԶՄԱՎԷՊԻ»-ի խմբագրութեան այս նոր թեր-
թի անդրանիկ պրակը հրատարակուած է հետեւեալ
պարունակութեամբ.

Յօդուածներ

Երեմ. Հ. Ս. Օգնենք ու գործենք (խմբագրական),

Ղազիկեան. Հ. Ա. — «Այտայի հրապարիչ» ող-
բերգութիւնը.

Երեմ. Հ. Ս. — Գեղունի (նկարագիր տիեզերա-
հըռչակ երգապետաց եւ վենետիկոյ ներկայ գեղարուես-
տի ցուցահանդէսին, և այլն):

Թրքահայ Դէմքեր (Պ. Օտեան. — Ս. Մայրապետ
Գալֆայեան. — Տօքթ. Փէշտիմալճեան):

Էփրիկեան Հ. Ս. — Դավրէժ տեղեկագրական նը-
կարաշիր):

Պատկերներ

1. Իտալ. երաժշտական փառքերու Ռոսսինիի, Պելլի-
նիի, Տոնիճէթիին եւ Վերտի խմբանկար:

2. Ապաստան մեղաւորաց (վենետիկոյ ցուցահանդէսին
սրտաշարժ պատկեր):

3. Դարձ ձկնորսութենէ (գլուխ գործոց տանիմարգա-
ցի Անքեր Միքայէլ նկարչի. զարդ վենետիկեան ցուցա-
հանդէսին):

4. Այս տարուան մէջ վախճանեալ երկու հռչակաւոր
իտալ.

5. Նկարիչներու գլուխ գործոցներուն գեղեցիկ պատկերք

6. Պ. Օտեան:

7. Ս. Մայրապետ Գալֆայեան:

8. Տ. Փէշտիմալճեան:

9. Դավրէժի Թամարեան մանկապարտէզի աշակերտաց
խմբանկար:

10. Դավրէժի Բերդաթաղի տեսարանը:

11. Դավրէժ քաղաքի ընդհանուր տեսարան:

12. Դավրէժի Հայ Օրիորդաց Թամարեան ուսումնա-
րանը:

Կողբը

Կողբը արտաքստպէս զարդարուած է գրքերու ծա-
նուցութեանով: Կ'ընդունուին յայտարարութիւններ, իւ-
րաքանչիւր տող կ'արժէ 50 սանդիւմ:

Կողբը ներքին երկու երեսներուն վրայ՝ կը պարու-
նակէ ժամանակակից ազգային նոր եւ կարեւոր տեղեկու-
թիւններ, բաղուած հայ լրագրիչներէ: Բայց աստի բազ-
մաթիւ նոր գիւտերու վրայ տեղեկութիւններ: Ամէնն ի
միասին հրատարակուած են մանրատու ութը երկայն
սիւնակներու մէջ:

«Գեղունի» կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ
Տարեկան Բաժնեգիրն է 3 Փրանք: 1 ռւ. 50 կոպէկ:

Թերթէս գոյացած մաքուր հասոյթին կէսը առան-
կրօնքի խտրութեան, կը յատկացնենք Ազգիս Որքիկո
Ճեռուն:

Ապագիկ Բաժանորդագրութիւն բացարձակապէս
չընդունուիր. Կ'ինը կանխիկ է:

Բաժնեգիրն, նամակ, և այլն, Ուղղակի հետեւեալ
հասցէին յղելու է.

«ԲԱԶՄԱՎԷՊ»

Սէն Լազար

Վէնիզ (Իթալի)

Ռուսաստանի եւ Ամերիկայի ազգայինք գիւրաւ ըս-
տանալու համար կարող են գիմել հետեւեալ մեր դոր-
ձակալաց

Ռուսաստան. — Պ. Գալուստ Գալուստեան Թիֆլիզ
Ամերիկա. — «Հայրենիք» խմբագրութեան

Պոսթոն Մաս

Печатинда «Взаимность» — Варна